



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE



Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
 E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org

ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԱԿԱԶՍՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ
ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՄՍԱՏՈՒՑՈՒԹՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆՈՒԵԼՈՎ՝
ՄԵՐ ԿԵԱՆՔԵՐԸ ՎԵՐԱԾԵՆՔ ՑՈՐԵՆԻ ԱՏՈՔ ՀԱՍԿԵՐՈՒ

ԸՍԱԲ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՋՐՕՐՀՆԷՔ

Կիրակի, 15 Յունիս 2008-ին, արժանաւորապէս նշուեցաւ Նեաւտա նահանգի Լաս Վեկաս հաստատուած ծխական համայնքի վերակազմութեան երկրորդ տարեդարձը:

Այս առիթով՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Սրբ. Արք. Մարտիրոսեան Ս. եւ անմահ պատարագ մատոյց Լուտերական Եկեղեցւոյ մէջ, իր պատգամը տուաւ շրջանի հաւատացեալ ժողովուրդին եւ նոր օրհնուած Սրբալոյս Միւռնոսկ կատարեց ջրօրհնէքի հոգեպարար արարողութիւն: Եկեղեցւոյ մուտքին Հ.Ս.Ը.Ս.ի Լաս Վեկասի «Արցախ» Մասնաճիւղի սկաւուտները դիմաւորեցին Առաջնորդ Սրբազան Հայրը: Սրբազանը օրհնեց սկաւուտները եւ անոնց աղօթքներ բաժնեց:

Սրբազան Հօր կը սպասարկէր Կրօնական Ժողովի ատենապետ եւ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Գրասենեակի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Օ. Վրդ. Ազնիկեան: Ներկայ էր վերապատուելի Եսայի Սարմազեան:

Պատարագիչ Առաջնորդ Սրբազանը հոգեւոր իր պատգամէն առաջ շնորհաւորեց Լաս Վեկասի եկեղեցական համայնքի վերակազմութեան երկրորդ տարեդարձը եւ բարձր գնահատեց ծխական յանձնախումբին, ժրաջան տիկնանց միութեան, դպրաց եւ յարակից միութիւններու եկեղեցանուէր ճիգերն ու ազգանուէր աշխատանքները: Ան իր պատգամին բնաբան ընտրած էր Աւետարանի Որոմներու առակը: Ան շեշտեց Տիրոջ այգիին, այսինքն՝ աշխարհի վրայ ցորեն ըլլալու կարեւորութիւնը եւ չտարուելու չարէն, աշխարհային պարտադրանք մոլութիւններէն, որոնք մեր կեանքերէն ու առօրեայէն ներս ներխուժած, չար որոմներու կը նմանին: Չարը եւ չարին հետեւող մեղաւորներ հունձքի, հատուցման օրը պիտի դատապարտուին: Պատարագիչ Սրբազանը կոչ ուղղեց բարի ու առաքիկ գործերով իմաստաւորելու երկրաւոր մեր կեանքը, միշտ հաւատարիմ մնալով մեր առաքելական եկեղեցւոյ դաւանանքին, Քրիստոսի

ուսուցումներուն, ընտանեկան սրբութիւններուն եւ ազգային աւանդութիւններուն:

Առաջնորդ Սրբազանը ներկաներուն յիշեցուց, որ շաբաթ մը առաջ, 7 Յունիսին, Անթիլիասի Մայրավանքի շրջափակէն ներս ներկայ գտնուած է Միւռնոսիներէի արարողութեան, եւ յաւարտ Ս. Պատարագի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ձեռամբ օրհնուած նոր Միւռնոսով ջրօրհնէք պիտի կատարուի: Ապա եզրակացնելով իր հոգեւոր խօսքը, Առաջնորդ Սրբազանը հրաւիրեց ներկայ հաւատացեալները հաղորդուելու սրբալոյս Միւռնոսի աստուածապարգէւ շնորհքներով, որովհետեւ «Միւռնոսը Աստուծոյ զօրութեան եւ Ս. Զոգւոյ ներկայութեան խորհրդանշն է, եւ նոր Միւռնոսը հին Միւռնոսէն, հետեւաբար՝ Ս. Թաղեոսի ու Ս. Բարթողոմէոսի Զայաստան բերած իւղէն հիւլէ մը իր մէջ կը պարփակէ, ինչպէս նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի, Շնորհալիներու, Տաթեւացիներու եւ հոյլը մեր սրբազան հայրապետներու օրհնած Միւռնոսէն մասնիկ մը ներկայ է այսօրուան մեր նոր Միւռնոսին մէջ»:

Զաւաքական խոստովանանքէ եւ հաղորդութենէ ետք, տեղի ունեցաւ ջրօրհնէքի արարողութիւն: Պատարագիչ Սրբազան հայրը, շարականի երգեցողութեամբ, նոր Միւռնոսը խաչածէն հեղուց եւ օրհնեց ջուրը, հոգեւոր լուսաւորութիւն, բժշկութիւն եւ մեղաց թողութիւն շնորհելու բոլոր անոնց, որոնք պիտի խմեն ու հաղորդուին Ս. Զոգւոյ պարգէւներով:

Յաւարտ Ս. եւ անմահ պատարագի, հաւատացեալներ դպրաց դասի ընկերակցութեամբ երգեցին «Կիլիկիա» եւ «Մեր Զայրենիք» երգերը: «Պահպանիչ»էն ետք, ներկաներ, յուշանկար մը ունեցան Առաջնորդ Սրբազանին հետ:

Արարողութեանց աւարտին, քառասնօրեայ նորածին երկւորեակներ, Առաջնորդ Սրբազանին կողմէ «Աստուծոյ խորանին ընծայուեցան» եւ քառասունքէ հանուելով օրհնութեան արժանացան:

Եկեղեցւոյ տիկնանց միութեան կողմէ ներկաները հիւրասիրուեցան եւ առիթը ունեցան Առաջնորդ Սրբազան Զօր հետ մտերմիկ գրուցելու:

ՃԱՇԿԵՐՈՅԹ

Նոյն երեկոյեան, կազմակերպութեամբ ծխական յանձնախումբին եւ եկեղեցասեր տիկնանց միութեան, տեղի ունեցաւ եկեղեցւոյ եւ Լաս Վեկասի հայ համայնքին վերակազմակերպման երկրորդ տարեդարձի ճաշկերոյթը:

Ողջոյնի եւ բարի գալուստի խօսքերէն ու գեղարուեստական կարճ յայտագրի աւարտին, փակման խօսքով հանդէս եկաւ Առաջնորդ Սրբազանը: Ան անգամ մը եւս շնորհաւորեց Նեւատա նահանգի Լաս Վեկաս հաստատուած եկեղեցական համայնքի երկրորդ տարեդարձը եւ յոյս յայտնեց որ Լաս Վեկասի համայնքը հաւատքով, միասնական ճիգերով եւ սերտ գործակցութեամբ, որպէս ցորենի հատիկներ Աստուծոյ ափերուն յանձնուելով՝ հոգեւորապէս կը պտղաբերին, ատոք հասկերու կը վերածուին ու կ'իրականացնեն սեփական եկեղեցի ունենալու երազը: Տակաւին, նկատի ունենալով որ Կիրակի, 15 Յունիսը նաեւ Զայրերու տօնն էր, Սրբազանը շնորհաւորեց բոլոր հայրերը, շեշտելով ու անդրադառնալով

տիպար հայրութեան յատկանիշներուն: Սրբազանը իր խօսքին մէջ վեր առաւ հայկական տոհմիկ բարոյական արժէքները, ազգային-եկեղեցական աւանդութիւնները, ընտանեկան սրբութիւնները անաղարտ պահելու հրամայականը:

Ուրախ եւ խանդավառ մթնոլորտի մէջ վերջ գտաւ ճաշկերոյթը, որուն ընթացքին յուշանուէրով պատուընուցան Առաջնորդ Սրբազան Յայրը, ծխական յանձնախումբի նախկին անդամները, համայնքի ամենէն երեց ու ամենէն կրտսեր հայրերը, նուիրատուներն ու մոմավառ զոյգերը:

Լաս Վեկասի հայ համայնքի վերակազմակերպման երկրորդ տարեդարձի հոգեւոր թէ տոհմիկ տօնախմբութիւնները գեղեցիկ առիթներ եղան եկեղեցւոյ շուրջ հայ համայնքին համախմբուելուն եւ դրական մթնոլորտի մէջ գիտակից յանձնառութիւններով զսպանակուած, միասնակամ ճիգերով նոր իրագործումներու յոյսերով գօտեպնդուելու:

Իսկ Երկուշաբթի, 16 Յունիսին, հրաւերովը Լաս Վեկաս հաստատուած Մարոնիթ համայնքի ներկայացուցիչներուն, Առաջնորդ Սրբազան Յայրը, քաղաքավարական այցելութիւն մը շնորհեց, ընկերակցութեամբ ծխական համայնքի ատենապետ Տիար Ատրուշան Արմենեանի եւ հոգաբարձական կազմի անդամներուն: Սիրալիր մթնոլորտի մէջ խօսակցութեան նիւթ եղան Լիբանան հայրենիքը յուզող ներկայ ընդհանուր կացութիւնը, Կաթողիկոսարանէն ներս Միւռնսօրինէքի պատմական դէպքը եւ միջ-համայնքային փոխադարձ գործակցութեան կարելիութիւնները: Սրբազանը նաեւ այցելեց նորակառոյց սրահը եւ նոր կառուցուելիք եկեղեցին:

Առաջնորդ Սրբազան Յայրը յետ միջօրեի թռիչքով վերադարձաւ եւ ներկայ գտնուեցաւ Ալէք Փիլիպպոս Ազգ. վարժարանի Փոստոյեան Մանկամտօրի ամավերջի հանդէսին:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE SECOND ANNIVERSARY OF THE LAS VEGAS PARISH

On Sunday, June 15th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited the Armenian Apostolic Church of Las Vegas and celebrated Divine Liturgy on the second anniversary of the re-establishment of the parish, delivered the sermon, and conducted the blessing of water ceremony with the new Holy Muron. The Prelate was greeted by scouts from the Homenetmen “Artsakh” chapter, whom he blessed and presented with illustrated prayer cards. The Prelate was assisted at the altar by Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian. In attendance was Rev. Yesayi Sarmazian.

Prior to the start of his sermon the Prelate congratulated the parish community on their second anniversary and highly commended the efforts of the parish council, ladies association, choir, and affiliated bodies. The theme of the sermon was the parable of the wheat and the tares, in which the Prelate stressed that at the time of harvest, or the Day of Judgment, the evil-doers, like the tares, will be judged accordingly, and the good, or the wheat, will inherit the

Kingdom of our Lord. Thus, he called on the parishioners to bring meaning to their earthly lives with their good deeds, always remaining faithful to the canons of the Armenian Apostolic Church, to the teachings of our Savior Jesus Christ, and to our family values and national heritage.

The Prelate reminded the faithful that one week earlier, on June 7th, the blessing of Holy Muron took place by H.H. Catholicos Aram I within the courtyard of the St. Gregory the Illuminator Cathedral in Antelias, and announced that the blessing of water with the new Muron would be taking place following the Liturgy. He concluded his sermon by inviting the faithful to receive the Holy Muron, which includes a portion of the oils brought to the Armenian nation by Saints Thaddeus and Bartholomew and St. Gregory the Illuminator, and which symbolizes the might of our Lord and the presence of the Holy Spirit in our Church.

Following confession and Holy Communion, the Prelate blessed the water with the new Muron, praying for spiritual enlightenment, healing, and forgiveness of sins for those who receive it. The service concluded with the faithful joining in the singing of "Giligia" and the Armenian national anthem, and the Prelate's benediction.

The second anniversary of the parish was further celebrated with a banquet organized by the parish council and ladies association. The program was comprised of remarks and an artistic program, as well as the presentation of mementos to the Prelate, former parish council members, and sponsors. In his concluding remarks, the Prelate once again congratulated the parish members and expressed hope that with faith, collective efforts and collaboration, the parish community will continue to expand and in due time realize their dream of having their own church. Given that the celebration coincided with Father's Day, the Prelate also congratulated all the fathers present, and emphasized the characteristics of an ideal father and stressed the need to preserve the values of the Armenian family and our religious and national traditions and treasures.

On Monday, June 16th, the Prelate, accompanied by parish council Chairman Mr. Adroushan Armenian and council members, met with representatives of the Maronite community of Las Vegas. During their meeting they discussed the current conditions in Lebanon, the recent blessing of Holy Muron in Antelias, and opportunities for collaboration between the two communities. The prelate also visited the newly built hall and the site for the soon to be constructed church.